



**<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ, ք. Երևան, Ռադիսոն Բլու հյուրանոց, <Արմենիա> դահլիճ
երեքշաբթի, 25 հունիսի 2019թ., 12:40**

Մասնակցեցին՝

Բաժնետերեր

30 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ

Գագիկ Զաքարյան (նախագահ)

Գեորգի Պիսկով

Էդուարդ Զամանյան

Վարդան Աթայան

Բանկի Վարչություն

Մեսրոպ Հակոբյան (նախագահ)

Արարատ Ղուկասյան

Գոհար Գրիգորյան

Օվսաննա Առաքելյան

Դավիթ Պետրոսյան

Գուրգեն Ղուկասյան

Տիգրան Բադանյան

Արթուր Ապերյան (Ժ/պ)

Հրավիրվածներ

ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ

<Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության ներկայացուցիչներ

Հայաստանի Բանկերի Միության նախագահ

Միջազգային և հայաստանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ

Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին, ժողովի քարտուղար նշանակեց **Աննա Բադոյանին**:

Աննա Բաղդյանը ներկայացրեց, որ 25.06.2019թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկը կազմված է 2019թ. մայիսի 10 դրությամբ: Ժողովի գումարման հայտարարությունը պատշաճ կերպով հրապարակվել էր <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել էին բաժնետերերին փոստի միջոցով կամ հանձնվել են առձեռն:

Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 25.06.2019թ.՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 25.06.2019թ.:

Բանկի քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172,886,525 հատ, որից քվեարկությանը մասնակցել են ձայնի իրավունք ունեցող 170,058,655 բաժնետոմսեր, կամ տոկոսային հարաբերությամբ 98.36%-ը:

Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ Գագիկ Ջաքարյանը հաշվետու տարվա ընթացքում Բանկի ձեռքբերումների շարքում առանձնացրեց շահույթի պլանի կատարումը, մանրաձախ վարկերի տրամադրման նկատելի աճի ապահովումը և ապառիկ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժինը մինչև 40% հասցնելու հանգամանքը: Նշեց ԱՊՀ երկրներում private banking-ի ոլորտում հաճախորդների լավագույն սպասարկում կազմակերպելու համար SPEAR՝ S Russia Wealth Management Awards 2018 մրցանակին արժանանալու, SME Banking Club կոնֆերանսում Յունիբանկը որպես 2018 թվականի ամենահինովացիոն բանկերի թվում ճանաչելու մասին: Ընդգծեց Հայաստանի և Արցախի սահմանամերձ դպրոցներում կրթության զարգացմանն աջակցելու նպատակով համակարգչային դասարանների բացման ծրագիր իրականացնելու կարևորությունը: Նշեց Բանկի հետագա ակտիվ զարգացումն ապահովելու նպատակով մասնաճյուղային ցանցի նախատեսվող ընդլայնման մասին:

Գագիկ Ջաքարյանը երախտագիտություն հայտնեց բաժնետերերին և հաճախորդներին վստահության, Կենտրոնական բանկին, Հայաստանի Բանկերի Միությանը և Հայաստանի Ֆոնդային Բորսային՝ ցուցաբերած աջակցության համար, Բանկի անձնակազմին՝ համատեղ աշխատանքի համար:

Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի կազմի և լիազորությունների ժամկետի հաստատում:

Ժողովի քարտուղար Աննա Բաղդյանը ներկայացրեց Խորհրդի առաջարկությունը Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի կազմի և լիազորությունների ժամկետի վերաբերյալ՝ հանձնաժողովի նախագահ՝ Աշխատակազմի ղեկավար Աննա Բաղդյան, անդամներ՝ Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման տնօրենի տեղակալ – դատաիրավական աշխատանքների դեպարտամենտի տնօրեն Նուրիջան Կիրակոսյան, Բյուջետային միջոցների վերահսկման վարչության պետ Հայկ Նալբանդյան, լիազորությունների ժամկետը՝ 3 տարի:

Բաժնետերերի ժողովը հաստատեց Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի կազմը և լիազորությունների ժամկետը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

կողմ՝ 170.058.655 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ 2018 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնելու համար:

Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ հաշվետու տարում Յունիբանկը շարունակեց դինամիկ կերպով զարգացնել բիզնեսի ռազմավարական կարևոր ուղղությունները՝ ամրապնդելով իր դիրքերը փոքր բիզնեսի և մանրածախ սեգմենտի հաճախորդների սպասարկման ոլորտում, ներդրումային ծառայությունների շուկայում: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել խնդրահարույց պարտավորությունների կրճատման, ակտիվների որակի բարելավման և ռիսկերի կառավարման ոլորտները: Ներկայացրեց նաև 2019 թվականի ռազմավարական առաջնահերթությունները:

Ամփոփելով՝ **Մեսրոպ Հակոբյանը** շնորհակալություն հայտնեց բաժնետերերին, հաճախորդներին, գործընկերներին, ինչպես նաև Յունիբանկի աշխատակիցների թիմին:

Գագիկ Զաքարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ: Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

կողմ՝ 170.058.655 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 3. <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմված Բանկի 2018 թվականի տարեկան հաշվետվությունները հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1.	ակտիվներ	209,799,688 հազ. ՀՀ դրամ, այդ թվում վարկեր՝ 134,279,082 հազ. ՀՀ դրամ
2.	պարտավորություններ	177,251,244 հազ. ՀՀ դրամ
3.	կապիտալ	32,548,444 հազ. ՀՀ դրամ
4.	զուտ տոկոսային եկամուտներ	10,518,060 հազ. ՀՀ դրամ
5.	զուտ այլ եկամուտներ	1,820,552 հազ. ՀՀ դրամ
6.	շահույթ/վնաս	931,297 հազ. ՀՀ դրամ

2018թ. ընթացքում <Յունիբանկ> ԲԲԸ դրամական հոսքերը՝

1. գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ 11,934,298 հազ. դրամ

2. դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ 3,302,109 հազ. դրամ
3. զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ (14,083, 456) հազ. դրամ
4. դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ՝ 1,152,951 հազ. դրամ
5. արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ (912,113) հազ. դրամ
6. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ՝ 31,843,954 հազ. դրամ
7. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 32,049,007 հազ. դրամ:

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց <Գրանթ Թորթոն> անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Գագիկ Զաքարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
 Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով՝

կողմ՝ 170.058.655 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 4. 2018թ. Ներքին աուդիտի հաշվետվության հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:

Ներքին աուդիտի տնօրեն Հայկ Սուվարյանի հարգելի պատճառով բացակայության հետ կապված՝ Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը ներկայացրեց **Ներքին աուդիտի տնօրենի տեղակալ Արթուր Ղուկասովը**: Ներկայացրեց ըստ տարեկան աշխատանքային ծրագրի և արտապլանային աուդիտորական ստուգումների ոլորտները: Արձանագրված խնդիրների (թվով 65 տեղային խնդիր, թվով 17 համակարգային խնդիր) լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր՝ պատասխանատու ստորաբաժանումների/աշխատակիցների և ժամկետների սահմանմամբ, խախտումների վերացման նկատմամբ իրականացվել է հետստուգում:

Ներքին աուդիտի եզրակացությամբ, Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին:

Գագիկ Զաքարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
 Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

կողմ՝ 170.058.655 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 5. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:

Ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանը** ներկայացրեց Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝

- <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ:
- Վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին:

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետեր <Uniholding GG Limited> ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 147,805,227 հատ, արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի քանակը՝ 32,010,000 հատ)

Էդուարդ Զամանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Հրահատ Արզումանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Դավիթ Փափազյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Վարդան Աթայան՝ Բանկի բաժնետեր (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 5,483 հատ)

Արտեմ Կոնստանդյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացան ձայների հետևյալ քանակը՝

Գագիկ Զաքարյան՝ 24.296.825 ձայն

Գեորգի Պիսկով՝ 24.287.739 ձայն

Էդուարդ Զամանյան՝ 24.281.314 ձայն

Հրահատ Արզումանյան՝ 24.281.314 ձայն

Դավիթ Փափազյան՝ 24.280.497 ձայն

Վարդան Աթայան՝ 24.283.641 ձայն

Արտեմ Կոնստանդյան՝ 24.280.400 ձայն

Դեմ բոլոր թեկնածուներին՝ 0 ձայն

Ձեռնպահ՝ 0 ձայն

Անվավեր՝ 66.925 ձայն կամ մասնակիցների ձայների 0.04%

Գագիկ Զաքարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:

Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ, վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին և հաստատել Խորհրդի կազմը հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան:

Հարց 6. <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:

ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանը** ներկայացրեց, որ հաշվի առնելով Բանկի 2018թ. ֆինանսական գործունեության արդյունքները, Բանկի Խորհրդի 08.05.2019թ. որոշմամբ առաջարկվում է սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, ըստ ՀՀՄՍ 931.297 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

Գագիկ Զաքարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, ըստ ՀՀՄՍ 931.297 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%՝

կողմ՝ 170.023.941 ձայն կամ մասնակիցների ձայների 99.979%

դեմ՝ 4.348 ձայն կամ մասնակիցների ձայների 0.003%

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 30.366 ձայն կամ մասնակիցների ձայների 0.018%

Հարց 7. <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան 2019թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ էր ներկայացրել <Գրանթ Թորնթոն> ՓԲ ընկերությունը:

Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից մրցույթն անցկացվել և արդյունքներն ամփոփվել են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով և Բանկի ներքին իրավական ակտով սահմանված պահանջներին համապատասխան: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ, մրցութային առաջարկի գնահատման արդյունքների հիման վրա հաղթող է ճանաչվել <Գրանթ Թորնթոն> ՓԲ ընկերությունը: 08.05.2019թ. Խորհրդի որոշմամբ որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատման է ներկայացվում <Գրանթ Թորնթոն> ՓԲ ընկերությունը:

Գագիկ Զաքարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել <Գրանթ Թորնթոն> ՓԲԸ միջազգային անկախ աուդիտորական կազմակերպությանը որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ՝

կողմ՝ 170.010.196 ձայն կամ մասնակիցների ձայների 99.98%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 30.366 ձայն կամ մասնակիցների ձայների 0.02%

Ժողովի քարտուղար **Աննա Բաղդյանը** հայտարարեց, որ Ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, դրանց հետ կապված որոշումներն ընդունված են:

Ժողովի մասնակիցների կողմից հարցեր տրվեցին Բանկի շահութաբաժնային քաղաքականության և շահութաբերության, Բանկի բարեգործական գործունեության, Բաժնետերերի Ժողովին վերաբերող կազմակերպչական հարցերի վերաբերյալ, որոնց Խորհրդի նախագահ Գագիկ Զաքարյանի, Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանի, Ժողովի քարտուղար Աննա Բաղդյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Բաժնետերերի Ժողովն ավարտվեց ժամը 13:30-ին:

Գագիկ Զաքարյան
Նախագահ

Աննա Բաղդյան
Քարտուղար

ք. Երևան, 27 հունիսի 2019թ.